



Հիմնադիր խորհրդարանը համախմբելու և ժողովրդին և նրա կամքի ու իրավաչափ ուժի գործադրման միջոցով.

- 1) հեռացնելու է հանցավոր ռեժիմին, այդ թվում՝ գործող Նախագահին, Ազգային ժողովին ու կառավարությանը,
- 2) դրանից հետո առաջացող կարճատև անցումային շրջանում (անցումային շրջանի տևողությունը որոշում է Հիմնադիր խորհրդարանը) կառավարելու է պետությունը՝ ստեղծելով նաև ժամանակավոր կառավարություն,
- 3) անցումային շրջանի ավարտին անցկացնելու է արտահերթ ընտրություններ, որոնց հիման վրա ձևավորվելու են Նոր Հայաստանի Ազգային ժողովն ու կառավարությունը:

Հիմնադիր խորհրդարանի ընտրությունը կազմակերպում է Հիմնադիր խորհրդարանի Ընտրական

հանձնաժողովը, որը կատարում է հետևյալ գործառնությունները.

- 1) Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ընտրագատման չափանիշներին համապատասխան նրանց ընտրագատում և գրանցում, ինչպես նաև թեկնածուներին գրանցելու կամ չգրանցելու վերաբերյալ իր որոշումների հիմնավորումների ներկայացում ու հրապարակում,
- 2) Հիմնադիր խորհրդարանի ընտրության մեխանիզմի ընդունում և դրա համաձայն ընտրության կազմակերպում, ինչպես նաև ընտրության արդյունքների հրապարակում,
- 3) իր գործունեության պարբերական հանրային իրազեկում:

Հիմնադիր խորհրդարանի ընտրության գործընթացի մասնակիցներն են.

- 1) Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուները,
- 2) Պատգամավորության թեկնածուներին լիազորելու համար ստորագրություններ հավաքողները,
- 3) Պատգամավորության թեկնածուներին լիազորելու համար ստորագրություն տվողները:

Հիմնադիր խորհրդարանի ընտրության կարգը

- 1) Որպես Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածու գրանցվելու համար դիմում ներկայացրած յուրաքանչյուր անձ այդ դիմումի գրանցումից հետո իր միջոցներով, իսկ եթե դա հնարավոր չէ՝ Նախախորհրդարանի աջակցությամբ, Ընտրական հանձնաժողովի կողմից նախապես սահմանված որոշակի ժամկետում հավաքում է իրեն լիազորող առնվազն 300 չլրկնվող ստորագրություն:
- 2) 300 կամ ավելի շատ ստորագրություն հավաքած առնվազն 100 թեկնածուների առկայության պարագայում Ընտրական հանձնաժողովը թեկնածուների ներկայությունն ապահովելու համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետի հաշվառմամբ նշանակում է Հիմնադիր խորհրդարանի ընտրության օր և այդ մասին պատշաճ կերպով ծանուցում է բոլոր թեկնածուներին:
- 3) Նշանակված օրը գումարվում է Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուների ընդհանուր ժողով և Ընտրական հանձնաժողովը նրանց կազմից Հիմնադիր խորհրդարան ընտրելու նպատակով կազմակերպում է վարկանիշային քվեարկություն: Առավելագույն թվով ձայներ ստացած 65 հոգին դառնում են Հիմնադիր խորհրդարանի պատգամավոր:
- 4) Հետագայում պատգամավորներից որևէ մեկի դուրս գալու պարագայում նրա տեղը լրացնում է վարկանիշային քվեարկությամբ առավել շատ ձայներ ստացած հաջորդ թեկնածուն:

Թեկնածուների ինքնառաջադրման, գրանցման և լիազորման համար ստորագրություններ հավաքելու ժամկետը՝ 16 մայիս-15 սեպտեմբեր 2014 թ.:

Հիմնադիր խորհրդարանի ընտրության նպատակով թեկնածուների ընդհանուր ժողովի գումարումը՝ մինչև 15 հոկտեմբեր 2014 թ.:

Ինքնառաջադրման նպատակով դիմում ներկայացնելու, ինչպես նաև Ընտրական հանձնաժողովից անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ կամ պարզաբանումներ ստանալու համար այցելել Ալեք Մանուկյան 5/5, Ռադիոտան հարևանությամբ, մուտքը՝ Մայիս-Նովա փողոցի կողմից (Նախախորհրդարանի գրասենյակ), հեռ. 011 785 657, 077 187 218 կամ Ակսել Բակունցի 2, բն. 82, հեռ. 010 220 567, 077 313 261:

Էլեկտրոնային կապ՝ elcomcp@gmail.com:

